

քել եւ ազգային Եկեղեցւոյ ազատութիւնը պահպանել: Հաւատքը, թէ ժողովրդեան դժուարին կացութեան դոնէ դոյզն չախով սփոփանք մը կրնայ ակնկալուիլ, եթէ Ս. Աթոռը միջնորդէ Շահին քով ի նպաստ Հայոց, դրդած էր կաթողիկոսը, անչուչտ Սպահանի լատին առաքեալներու յորդորմամբ, առնելու այս քայլը: Կարելի է ենթադրել թէ առ այս քաջալերած ըլլան զինքը նաեւ Զուլայեցիք, որոնց խնդրանքով 1602ին դիմած էր Մեկքիսեղեկ Կղեմէս Զ.ին:

Զուլայեցիներու համար կարեւոր էր Ս. Աթոռի պաշտպանութիւնը: Արեւելքի վաճառականութիւնը անոնց ձեռքն էր արդէն Օսմանեանց օրով: Ունէին առեւտրական յարաբերութիւններ թէ արեւելեան եւ թէ արեւմտեան շահաստաններու հետ⁷: Եւ Շահ Աբաս, երբ որոշեց Զուլան տեղահանել (1605), ոչ այնչափ անոնց դիդած ոսկւոյն եւ արծաթին աչք ունէր, որչափ կը դիտէր անոնց փորձառութիւնն ի նպաստ Պարսկաստանի առեւտուրին շահագործել: Այս պատճառաւ ալ ընծայեց անոնց ամէն զիւրութիւն, փոխադրուելու Սպահան եւ քաղաքին արուարձանին մէջ զեւեղուելու. ուր եւ հիմնուեցաւ Նոր Զուլան: Առեւտրական հիմնարկութիւնները երկրին եւ արտասահմանին մէջ մնացին. ստացան նոր

⁷ 1610ին կ'ըսէին Հայերը Շահ Աբասին. «Ժողովուրդքն Զուլայեցւոց եւ Կողթան դաւառին... բազումք են վաճառականութեամբ այժմ ի Փռանկասան»։ Առ. Դաւրիթեցի, 191: